

սում սկզբում հրաձիգ զենքերի դէմ՝ ստկոյն, զորա բաւական նպաստեցին քաղաքակրթութեան յաղթանակելուն, Գալով ինձ, — ես խոր համոզուած եմ, որ զիտութիւնը մի բարիք է, նա տալիս է զենք չարիքի զէմ մարտնչելու և նորան ոչնչացնելու համար և վերջուպէս նա պիտի ծառայէ միայն յառաջազիմութեան, ես այստեղ հասկանում եմ մի այնպիսի ճշմարիտ յառաջազիմութիւն, որ անխզելի կապուած է մարդու յարգանքի և նորա ազատութեան հետ:

$$\left(\frac{1}{\lambda}, \dots, \frac{1}{\lambda}, \frac{1}{\lambda} \right)$$

Uwrgbun Skp Vwppbtklhwng.

1883 ፲፻፸፩ ፲፻

1. H_2O L_2O_3 M_2O_3

Ա Զ Գ Ա Յ Տ Ե

ՊԱՇՏՈՆԻ ԽՈԹԵՒԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑԱ ԱՐԱՔԵԼՈՒԹՅ

Ա. ԵԿԵՂԵՑԻՈՒԹ

11.

ԿԱՐԹՈՒԳԻ ՏԻՊՈՒԹԵԿՆ.

Հայաստանեայց եկեղեցական Վարչութեան գլուխն է Ա. Էջմիածնի ընդհանրական Պատրիարք Կաթողիկոսը։ Այս նուիրական իշխանութիւնը սկիզբն առաւ է. Գրիգոր Լուսաւորչից և մինչեւ մեծն նորսէս Ա., Հայրապետները Ա. Օչումը ստանումէին Կեսարիայում. բայց ՅԵ թուրին Վաղարշապատում եղած աղքային եկեղեցական Համագումար ժողովով որոշուից որ ընտրեալ Հայրապետը մեր եկեղեցւոյ և պահուներից ընդունի կաթուղիկոսական Ա. Օչումն, այլ ևս Կեսարիա չը գնայ։

Ազգիս քրիստոնէութիւն ընդունելու հետ սկսուած ոյս իշխանութեան աթոռը եղաւ Ս. Էջմիածին Թէև քաղաքական հանգամանքների բերմամբ հայրապետական Աթոռը զանազան տեղեր փոխադրուեց սակայն 1441 թուին Վաղարշապատի Համագումար Փողովի որոշմամբ նորից հաստատուեց Ս. Էջմիածնի Կաթողիկէ Մայր Եկեղեցում, իւր հետքերը թողնելով Սուում և Աղթամարում։ Ս. Էջմիածնի ընդհանրական հայրապետութեան հատուած Սոի և Աղթամարայ կաթուղիկոսութիւնները մինչեւ ցայսօր գոյութիւն ունին, որոնց առաջինը կոչվումէ Կաթուղիկոսութիւն տանն Կիլիկիոյ, իսկ երկրորդը՝ Կաթուղիկոսութիւն Տանն Աղթամարայ։

Աղուանից կաթուզիկոսութիւնը օր սկսուած էր Ս. Գրիգոր Լուսառչութիւնն Ս. Գրիգորիսից դարուս սկզբից աւելորդ համարուց և առ ժամանակ մի մետր ալուիտ կոչուող արքեպիսկոպոսի ձեռքով կառավարուելուց յետոյ միացաւ Պարարագու Արքեպիսկոպոսութեան չետ:

Բ.

ՊԵՏՐԻԱՄ-ՔՈՒԹԻԿՆ.

Կաթուզիկոսութիւնից յետոյ գալիս են Երուսաղէմի և Ա. Պոլսոյ պատրիարքութիւնները:

ԵՐՈՒՑԱԿԱՄԻ ՊԵՏՐԻԱՄ-ՔՈՒԹԻԿՆ սկսուած է Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Ս. Յակովը Տեառն եղբայր կոչուած առաքեալից: Սկզբում՝ այս աթոռը յատկապէս մի ազգի սեպհականուած չէր, այլ ընդհանուր քրիստոնէից էր պատկանում: Երբ Քրիստոսի եկեղեցին սկսուեց բաժանուել մասների: այդ Աթոռը յատկացաւ Հայերին: Այս Աթոռի յատկապէս Հայոց սեպհականուած պատրիարքութիւնը սկսուելէ 637 թուին և Խատուապէ Իրրաշիմ Խօմերի հրովարտակով պատրիարք և Հայոց, Ասորոց ու Պատեաց ներկայացուցիչ նշանակուեց Արքահամ անունով մի Հայ Եպիսկոպոս: Այս պատրիարքութիւնը իսկապէս Պաղեստինէի և Եգիպտոսի Հայոց Արքեպիսկոպոսութիւն պէտք է համարել և ըստ եկեղեցական աւանդութեան թէև նախապատիւ քան Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքը: բայց ըստ վարչական սահմանադրութեան՝ ստորագրեալ Ընտրեալ պատրիարքը ցմահէ:

Կ. ՊՕԼՍՈՅ ՊԵՏՐԻԱՄ-ՔՈՒԹԻԿՆ սկսուած է 1461 թուին: Երբ Սուլթան Մէհմեմէտ Գաթիչ տիրելով Կ. Պոլսոյ՝ Բրուսայի Յովակիմ Եպիսկոպոսին նշանակեց Կ. Պոլսոյ առաջնորդ Փատրիկ (Պատրիարք) կոչմամբ: Կ. Պոլսոյ առաջնորդը որպէս մայրաքաղաքի արքեպիսկոպոս և կենցրօնական Վարչութեան ղեկավար, քաղաքականապէս համարգումէ Տաճկահայոց ներկահայոց իշխանութիւն և Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ, իսկ հոգեորապէս՝ փոխանունորդ ընդհանուր հայութան պատրիարք Հայոց Հայրապետիւն Ս. Էջմիածնի առջանք է:

Մինչեւ դարուս սկիզբը Ս. Էջմիածնի ընդհանրական Հայրապետի իրաւասութիւնը աւելի նկատելի է եղան բոլոր Հայութն ակ տեղերում և յարաբերութիւնները աւելի սերտ են եղել: Հայրապետը ներգործումէր իրանից նշանակուած առաջնորդների և նուիրակների ձեռքով ի պահանջել հարկին՝ անձամբ այցելելով ուր հարկն է: սակայն զարուս առաջին քառորդում՝ տեղի դժուած քաղաքական գէպիքը պատճառ եղան

արտաքին յարաբերութեանց փոքր ինչ թուլանալուն։ Այդ գէպերն էին։ Յովսէփ Արզութեանի բացառիկ գէպեռվ կաթու զիկոս ընտրուիլը, Դաւթեանց և Դանիէլեանց վէճերը ելն։

Մինչև Եփրեմ Կաթուղիկոսի ընտրութիւնը, թէե Հայրապետական Աթոռը Պարսից սահմանումն էր, սակայն նորընտիր Հայրապետը իւր սրաշտօնը և հովուապետական իրաւունքը անարգել ամենայն տեղ գործադրելու համար ստանումէր Պարսից շահի բաղամը, Տաճկաց Առևթանի ֆերմանը և երբ Հայերը Ռուսաստանում բազմացան, նաև Ռուսաց կայսեր հրովարտակը, և այս սկսեալ Երևանցի Սիմեոն կաթուղիկոսից։

Ա. Էջմիածինը, որով և Հայրապետական Աթոռը, Պարսից ձեռքից ազատուելուց յետոյ՝ ընտրեալ Հայրապետը միայն Ռուսաց կայսեր հրովարտակով է ճանաչվում։ Պարսից Դուռը ընդունումէ ընդհանրական Հայրապետի իրաւասութիւնը իւր հպատակ Հայերի վերայ թէ ըստ կրօնականին և թէ ըստ եկեղեցական վարչականին։ իսկ Տաճկաց Դուռը՝ միայն ըստ կրօնականին։

Յովհաննէս Ք. Կաթուղիկոսից յետոյ Ներսէս Ե.ի ընտրութեամբ թէպէտ Տաճկահայոց յարաբերութեանց սառնութիւնը մի աստիճան մեղմացաւ, սակայն նախկին սերտ յարաբերութիւնը անհնար եղաւ վերահաստատելու Բայց և այնպէս Ա. Էջմիածնի և Տաճկահայոց մէջ եղած բարոյական կապը օրինականութիւն է ստացել Ռուսահայոց Պալաժենիպով և Տաճկահայոց ազգային Սահմանագրութեամբ։

Խօսենք նախ Ռուսահայոց վարչական կազմակերպութեան մասին։ Ռուսահայոց հոգեոր վարչական գործերը կառավարումեն ըստ տրամադրութեան Պալաժենիպի, որ հաստատուած է 1836 թուին ու գործադրութիւն է ստացել 1837 թուին։ Ընդհանրական Հայրապետը, որ իւր կոչման պատշաճեալ հովուապետական իրաւունքը անկախ կերպով գործադրումէ, վարչական գործերին ընթացք է տալիս այն հոգեոր ատենատեղիներով ու հաստատութիւններով՝ որոնք պարտաւորուած են ըստ ամենայնի աջակից և գործակատար լինելու։

Այդ ատենատեղիներն են —

‘Նախ’ Սինօդ, որ իրեւ բարձրագոյն ատենատեղի հոկող և համարառու է։ Սինօդի ատենապետն է Ընդհանրական Հայրապետը, Սինօդը ունի ուժն անդամներ, որոնք ըստ առաջարկութեան Ընդհանրական Հայրապետի՝ հաստատվումեն թագաւոր Կայ թից։ Կան և զիւանական աստիճանաւոր ծառայողներ։

Բ. Կոնսիստորիա որ իրեւ Թեմական Ատենատեղի՝ հոկումէ թեմական հոգեոր եկեղեցական գործառնութեանց վերայ, տարեվերջին հաշիւ է Ներկայացնում Սինօդին, և իրեւ ստորագրեալ Սինօդի՝ ամեն գործում պատասխանատու է։ Այս Ատենականի Ատենապետն է Թեմակալ

Առաջնորդ Արքեպիսկոպոսը, որ ըստ առաջարկութեան Ընդհանրական Հայրապետի հաստատվումէ թագաւոր Կայսրից, որ իւր վիճակի հոգեոր և եկեղեցական գործոց լիակատար կառավարիչն է, որին գործակից են իւր թեմի բոլոր հոգեոր ատենատեղիք և հաստատութիւնը, Այս ատենի անդամներն են երեք. մինը վարդապետ կամ աւագ քահանայք, որ նախանդամ է կոչվում, իսկ երկուքը քահանայք. կան և զիւանական աստիճանաւոր ծառայողներ:

Գ. Հոգեոր Կառավարութիւն, որ իրեւ գաւառական հոգեոր ատենատեղի, հսկումէ իւր շրջանի եկեղեցական գործառնութեանց վերայ և իրեւ ստորագրեալ պատասխանատու է թեմի Կոնսիստորիային՝ որին և ներկայացնումէ իւր գործառնութեանց հաշիւը։ Այս ատենի նախագահն է գաւառի Յաջորդը կամ առաջնորդական փոխանորդը, իսկ անգամներն են երկու քահանայք. վարդապետ չեղած ժամանակ միայն ատենի նախագահի պաշտօն կարող է կատարել նաև մի աւագ քահանայք կայ նաև զիւանական աստիճանաւոր ծառայող։

Բացի այս երեք կարգ ատենատեղերից՝ կան նաև գաւառների բարեկարգիչներ։ որոնք ենթագրեալ են մերձաւոր իշխանութեան։

Ըստ Պալատենեայի՝ վարչական հաստատութեանց թիւն է Սինօդ՝ մի, Թեմ՝ և իւր Կոնսիստորիա՝ վեց, իսկ Հոգեոր Կառավարութիւն՝ իւրաքանչիւր թեմի մէջ մի քանի հատ, ինչպէս որ իւր տեղը ցոյց կը տանք։

Մեր եկեղեցական վարչութեան կենդրոնն է Ա. Էջմիածինը ուր կան հետեւալ հաստատութիւնները իրանց գործող անձինքներով։

Ա. Առաջնորդ Սինօդի՝ Ընդհանրական Հայրապետ ամենայն Հայոց

Առ այժմ Տեղակալ Ատենապետի Մակար Արքեպիսկոպոս։

Մկրտիչ Արքեպիսկոպոս Բարամեան։

Մերոպիր Եպիսկոպոս Սմբատեան։

Անդամք Յովակիմ Եպիսկոպոս տէր Գրիգորեան։

Արեսէս Եպիսկոպոս Խուդավելուտեան։

Գրիգոր Եպիսկոպոս տէր Մատթէոսեան։

1. Պրօկուրոր՝ Աագվօրնի Սովետնիկ Նիկողայոս Ստեփաննոսեան Տէր Յովակիւնց։

2. Ատենապղիր՝ Աագվօրնի Սովետնիկ Առւքիաս Ստեփաննոսեան Թաղիանոսեանց։

3. Աստիճանաւոր առանձին յանձնարարութեանց՝ Կոլեժսկի Ասսեսօր Զաքարիա Տէր Յովաննիսեան Տէր Զաքարեանց։

4. Համարակալ՝ Կոլեժսկի Ասսեսօր Գէորգ տէր Յարութիւնեան Զանիբէկեանց։

5. Գործավար Կառավարչական մասին՝ Կոլեժսկի Ասսեսօր Ստեփաննոս Տէր Զաքարեան Մուշեղեանց։

6. Գործավար Դատաստանական մասին՝ Տիտուլեարնի Սովետնիկ Փի-
լիպոս Արքայական Նաւասարդեանց.
7. Գործավար Տնտեսական մասին՝ Տիտուլեարնի Սովետնիկ Պազար
Գէորգեան տէր Պազարեանց.
8. Կարգապահ մատենավար՝ Տիտուլեարնի Սովետնիկ Յովակիմ Յով-
հաննիսեան Շամքորեանց.
9. Դիւանապահ՝ Տիտուլեարնի Սովետնիկ Գարբիէլ Տէր Արքայա-
մեան Սմբատեանց.
10. Թարգման՝ Տիտուլեարնի Սովետնիկ Յարութիւն Մովսիսեան Տէր
Եսպյեանց.
- Խըսքանչիւր գործավար ունի իւր առանձին գրագիրները:

Զեկուցում ներկայացնում են

ԲՀ. Կառավարչական մասն, ԳՀ. Դատաստանական մասն, ԴՀ. Տնտե-
սական մասն, ԵՀ. Հաշուարարական մասն, Աւր. Աւումնարանական
մասն:

Ա.Ա.Ն.Ք.Ա.Կ.Ա. ԿԱՌԱՎ.ԱՐՈՒԹԻՒՆ Ա. Է.Ձ.Մ.Ի.Ա.Ծ.Ն.Ի.

Կախանդամ	Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանց
Անդամք	Գրիգոր վարդ. Տէր Ստեփաննոսեան
	Ենտօն վարդ. Վարդաղարեան.

ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կախանդամ	Արիստակէս վարդ. Տէր Դաւթեան.
Անդամք	Սահակ սարկաւագ Գէորգեան.
	Եփրեմ սարկաւագ Սուքիանեան.

Հիւրընկալ՝ Գրիգորիս վարդ. Տէր Յակոբեան,
Խմբագիր Արարատ ամսագրի Յաւսիկ վարդ. Մովսիսեան.
Տեսուչ Շեմարանի՝ Արշակ Նահապետեան:

ԹԵՄՓ. ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՓ.

Ա. ԱՐԱՐԱՏԱՅ ԿԱՄ ԵՐԵՒԱՆԱՅ ԹԵՄ. Վիճակ Ընդհանրական Հայ-
րապետին:

(Կենդրօն Երևան քաղաք):

Փոխանորդ Թեմակալին և Ատենապետ Կոնսիստորիայի Գէորգ Եպիս-
կոպոս Սուրբեան:

Անդամք Կոնսիստորիայի՝ Գէորգ Քչնյ. Թաղիանոսեան, Ստեփաննոս Քչնյ. Տէր Գրիգորեան, և Պօղոս Քչնյ. Այլազեան։
Ատենագոկիր Գուրեբենսկի Սեկրետար Սիմեոն Փիլիպոսեանց։
Գործավար Գուրեբենսկի Սեկրետար Յակոբ Տէր Մէլքիսեդեկեան։
Գիւանապահ Մկրտիչ Տէր Առաքելեան։
Պաշտօնակատար Թեմական Աերատեսուչի Երևանայ և Կարսոյ վիճակի Պիրճ Պոօշեան։
Տեսուչ Հոգ. Թեմական Դպրանոցին Երևանայ Սարգիս Բէկնաղարեան։

1. ՅԱԶՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԱԽԻՉԵՏԱԿԻ.

(Կենդրօն՝ Կախիջևան Քաղաք)

Յաջորդ վիճակի և Կախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Յարութիւնեան
Անդամք՝ Մկրտիչ Աւագ Քչնյ. Իսահակեանց, և Մկրտիչ Քչնյ.
Տէր Սարգսեանց։
Քարտուղար Յարութիւն Տէր Գարբիէլեան։

2. ՅԱԶՈՐԴՈՒԹԻՒՆ ՍԻՒՆԵԸՆՑ.

(Կենդրօն՝ Տաթևու վանք)

Յաջորդ վիճակի և Կախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Յովհաննէս վարդ. Ղալամեան։
Անդամք՝ Սիմեոն վարդ. Լալազարեանց, Յովհաննէս Քչնյ. Տէր
Յակովիսեանց։
Քարտուղար Աւետիս Յովհաննիսեան։

3. ՅԱԶՈՐԴՈՒԹԻՒՆ ՇԻՐԵԿԱՑ

(Կենդրօն՝ Ալէքսանդրապոլ Քաղաք)

Յաջորդ վիճակի և Կախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Սահակ վարդ. Բաղդասարեան։
Անդամք՝ Մարտիրոս Քչնյ. Տէր Պօղոսեան և Արդանէս Քչնյ. Տէր
Գէորգեան։
Քարտուղար Գուրբենսկի Սեկրետար Կարապետ Զանիբէգեան։
Տեսուչ Վիճակային Հոգեոր Դպրոցի Բժիշկ Գարբիէլ Յովհաննիսեան։

Բ. ԱՐՅԱԽՈՒ ԿԱՄ ՂԱՐԱԲԱՐՈՒ ԹԵՄ.

(Կենդրօն Շուշի)

Կառավարիչ Թեմի, և Ատենապետ Կոնսիստորիայի. Գրիգոր Արքապիսկոպոս Սագինեանց։

Անդամք Կոնսիստորիայի՝ Կարապետ Աւագ ՔՀՆՅ. Հախիեանց, Սիմեօն Աւագ ՔՀՆՅ. Տէր Խորայէլեանց և Համազասպ ՔՀՆՅ. Տէր Աւետիքեանց:

Ատենադպիր Տիտուլեարնի Սովետնիկ Խոհհակ Լազարեանց:

Կարգապահ Մատենավար Գուրեբնսկի Սեկրետար Միրզա Տէր Սարգսեան:

Թեմական Վերատեսուչ Յովհաննէս Տէր Գրիգորեանց:

Թեմական Հոգեոր Դպրանցի Տեսուչ Զաւատ - Բէկ Խշանեանց:

ՅԱՅՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՔՈՒԾԸ

(Կենդրոն՝ Կոմախի Քաղաք)

Յաջորդ վիճակի և Նախագահ Հոգեոր Կառավարութեան Գարեգին վարդապետ Սայմունեանց:

Անդամք Սիմեօն ՔՀՆՅ. Տէր Պողոսեանց և Մինաս ՔՀՆՅ. Տէր Պողոսեանց:

Քարտուղար Կարապետ Փիրզատեանց:

Դ. ՇԱՄԱԽԻՈՑ ԹԵՄ

(Կենդրոն՝ Շամախի Քաղաք):

Կառավարիչ թեմին և Ատենապետ Կոնսիստորիայի՝ Թաղէոս Եպիսկոպոս Զիւնական:

— Անդամք Համազասպ Վարդ Համազասպեանց, Սարգիս Ա. ՔՀՆՅ. Փիրզերտեանց և Գրիգոր ՔՀՆՅ. Պետրոսեանց:

Ատենադպիր, Տիտուլեարնի Սովետնիկ Արքահամ Շահվերդեան

Թեմական Վերատեսուչի պաշտօնը կատարումէ թեմի Կառավարիչ Թաղէոս Եպիսկոպոս Զիւնական:

Դ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵԽ ԻՄԵՐԵՔԹԻ ԹԵՄ:

(Կենդրոն՝ Թիֆլիս Քաղաք):

Առաջնորդ թեմին և Ատենապետ Կոնսիստորիայի՝ Երիստակէս Եպիսկոպոս Սեղբակեան:

— Անդամք Արիստակէս Ա. ՔՀՆՅ. Բէկրիեան, Կարապետ ՔՀՆՅ. Տէր Սարգսեան և Թաղէոս Քահ. Խօջաէնաթեան:

Ատենադպիր, Տիտուլեարնի Սովետնիկ Գրիգոր Նիկողայոսեան Բէկժանեանց:

Թեմական Վերատեսուչ Դաշտարոս Աղայեանց

Տեսուչ Ներսիսեան Ազգ Հոգ. Դպրան. Սողոմոն Եղիազարեան

1. ՅԱՅՈՐԴՈՒԹԻՒՆ ԱԽԱԼՑԽԱՅԻ.

(ԿԵՆՏՐՈՆ՝ ԱԲԱԼՅԻԱ)

Յաջորդ վիճակի և նախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Մամբրէ Վարդապետ Սանսարեանց:

— Անդամք. Եղիա աւագ քչնյ. Համբարձումեան և Արքահամբ քչնյ. Դաշտաղեան:

2. ՅԱՅՈՐԴՈՒԹԻՒՆ ԳԱՅՆԱՅԻՈՒ

(ԿԵՆԴՐՈՆ ԵՂԻՂԱՎԵԹՈՎՈՅՈՒ)

Յաջորդ վիճակի և նախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Անանիա Վարդ. Համազապեան:

— Անդամք. Գրիգոր քչնյ. Թումանեանց և Գրիգոր քչնյ. Քաքաքենեանց:

3. ՅԱՅՈՐԴՈՒԹԻՒՆ ԳՈՐԻՈՅ

(ԿԵՆԴՐՈՆ՝ ԳՈՐԻ ՔԱՂԱՔ).

Յաջորդ վիճակի և նախագահ Հոգեոր Կառավարութեան՝ Գէորգ Վարդ. Տէր Մարտիրոսեան:

— Անդամք. Գրիգոր Ա. քչնյ. Փանեանց և Յակովը քչնյ. Գուլեանց:

Ե. ՆՈՐ — ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄ.

(ԿԵՆԴՐՈՆ՝ ՔԻՉՆԱ).

Առաջնորդ Թեմի և Առենապետ Կոնսիստորիայի՝ Մակար Արքեպիսկոպոս:

Անդամք. Կոնս. Քարսեղ քչնյ. Խաղանձեանց և Սարդիս քչնյ. Թաթուիզեան:

Պաշտօնակատար Առենագպրի Ստեփաննոս Քարիսուդարեանց:

Թեմական տեսչի պաշտօնը կատարումէ Առաջնորդը իւր օգնականների ձեռքով, որոնք են.

Բեսարարիայի մէջ՝ Ստեփաննոս Քարիսուդարեանց:

Տաւրիկեան նահանգի մէջ՝ Օգսենտիոս քչնյ. Կոպչակեանց:

Նոր նախիջեան քաղաքի մէջ՝ Թեմական Հոգ. Դպրանոցի Տեսչութիւնը, իսկ գիւղօրէից մէջ՝ Հոգ. Կառավարութիւնը:

1. ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՊԵՏԵՒԹՈՒՐԳԻ.

Անդամք. Յովհաննէս Ա. քչնյ. Պօղոսեան և Գէորգ քչնյ. Խանթարձեանց:

Քարտուղար Ալէքսանդր Սահառունի:

2. ՀՈԳԵՏՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՍԿՎԵՑԻ.

Անդամ Յակովը Ա. քշնյ. Սուրբէնեանց.

3. ՀՈԳ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԴՈՐ—ՆԱԽԵԶԵՏԱՆ.

Անդամը. Նիկողայոս քշնյ. Սաղիմեանց, և Մարտիրոս քշնյ. Գանձապետեանց:

Քարտուղար Գէորգ քշնյ. Մուշեղեան.

Տեսուչ Թէմ. Հոգ. Դպրանոցի՝ Գալուստ Կարապետեան Զարխէնեանց.

4. ՀՈԳ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐԻՕԼՍՈՅ.

Անդամ. Դաւիթ Ա. քահ. Շահինեանց:

5. ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՂ.

(Կենդրօն՝ Աստրախան)

Կառավարիչ Թէմի և Առենապետ Կոնսիստորիայի՝ Սուրբոս Եպիսկոպոս Պարզեան.

Անդամը. Յովուէլ Ա. քշնյ. Բունիաթեանց, Դաւիթ քշնյ. Դադոշեանց, Միլքիսեղեկ քշնյ. Քայանթարեան և Գարբիէլ քշնյ. Բախրեանց.

Առենադպիր Գէորգ Խալաթեան.

ՅԱՅՈՐԴՈՒԹԻՒՆ Դ. Ձ. Ա. Ա. Բ.

Փոխանորդ միջակի և Կախաղահ Հոգ. Կառավարութեան՝ Ադամ Վարդ. Տէր Նիկողայոսեանց.

Անդամը. Ասհան քշնյ. Պապութեանց և Խորէն քշնյ. Դօրդանեանց:

Է. ԿԱՐՍԻ ԵԽ ԲԱԹՈՒՄԻ ԹԵՂ

(Կենդրօն Կարս)

Առանորդ միջակի Գրիգորիս Եպիսկոպոս Աղուանեանց, որ առաջնորդական գործերը վարում է բատ Հին սովորութեան:

ՊԱՐՈԿԱՀԱՅՑՔ

Ա. ՊԱՐՈԿԱՀԱՅՑՔԻ ԵԽ ՀԵԴԱՊՏԱՆԻ ԹԵՂ

(Կենդրօն Ասպահանու Նոր Զուղայի Ամենափրկչի վանք)

Առաջնորդ թեմի Գրիգորիս Աբքալիսկոպոս:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՂ.

(Կենդրօն Գավրիէլ քաղաք)

Կառավարիչ թեմի Թագէոս Եպիսկոպոս Տէր Դանիէլեան:

Թերես յաջողի մեզ հետևեալ համարում Տաճկահայոց վարչական հաստատութեանց և գործող անձանց ցուցակը հրատարակել.

Յուսիկ Վարդապետ.

ԿԱՅՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ.

Հանգուցեալ Տէր Գէորգ Պ. Վ. հայտիառ Հայրապետի մահից յետոյ Ս. Սինօղը տարւոյս Մայիս ամսին նշանակած լինելով ընտրութեան ժամանակը, գեռ անցեալ 1883 թուի Հոկտ. ամսին ծանուցագրերն ուղարկեց վիճակները յանուն վիճակաւորաց, Սուսաստանինը, եւ Պարսկաստանինը՝ ուղղակի, խակ Տաճկաստանինը՝ Թիֆլիզու Գլխաւոր Կառավարութեան միջոցաւ՝ Պատրիարքարանի ձեռքով։

Այդ ծանուցագրերի մէջ արգէն յիշուած է թէ վիճակները ինչպէս պէտք մասնակցեն ընտրութեան։ Արարատի խմբագրութիւնը մինչեւ այսօր ոչինչ չըխօսեց մինչեւ որ իրան յայտնի յարակից հանգամանկները ստացան որոշ զրութիւն. մինչեւ որ Կ. Պօլսոյ Լիազօր Յանձնաժողովը վերջացնելով խոր պարապմունքը, իւր աշխատաւթեան արդիւնքը յանձնեց Ազգային երեսփոխանական ժողովի որոշմանը։ Բուռն վիճարանութիւններից յետոյ ինչպէս երեւոմէ, երեսփոխանական ժողովը որոշել է 1866 թուի Ընտրութեան եղանակով վարուել այս անդամը ևս։ Այս բանը հաւասար նաև Պօլսոյ Պատրիարք Ամենապատիւ Տ. Ներսէս Սրբազն Արքեպիսկոպոսի համար 189 ի 1-ն Յունիարի տարւոյս գրութիւնը, ուղղեալն յանուն Ամենապատիւ կաթողիկոսական Տեղակալ Հօր և Սինօդականաց Ս. Էջմիածնի։

Յայտնի է որ 1866 թուին Կ. Պօլսից եկած պատգամաւորները ոչ թէ Ս. Էջմիածնի ընտրութեանը մասնակցեցին, այլ յայտնեցին Ս. Էջմիածնի ընտրող Ժողովին ընտրեալի անունը. խակ Ս. Էջմիածնի Ժողովը ձեւկանութիւնը պահպանելուց յետոյ, ստորագրեց ընտրութեան թերթին։ Այս ձեւ ընտրութիւնը թէեւ չէր կարող օրինակելի ժողով լինել, սակայն Ժողովականք նպատշաճ գատեցին ընդունել այնպիսի բանաւոր պատճառներ ունենալով, որոնք այժմ հարկ ըրկայ բացատրելու, մանաւանդ որ այլ ևս ժամանակ էլ ըրկար ուրիշ կերպ վարուելու։ Այս բանի առաջքը առնելու համար այս անդամ Սինօղը որոշեց առանձին առանձին ծանու-